

Հրապարակված է 22.05.2026թ.
Ամփոփագրում նշված պայմանները
կարող են փոփոխված լինել
Հեռ. (+374 10) 510 510, www.inecobank.am

ԲԻԶՆԵՍ ՊՐԵՄԻՈՒՄ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ (ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ)		
Գործառնության տեսակը	VISA PLATINUM BUSINESS	VISA SIGNATURE BUSINESS
Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ Ռուբլի	
Քարտի գործողության ժամկետ	5 տարի	
Քարտի թողարկում	Անվճար	
Քարտային հաշվի ամսական սպասարկման վճար ¹	3,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ
Կից քարտերի հնարավորություն ²	• Visa Platinum Business • Visa Business	• Visa Signature Business • Visa Platinum Business • Visa Business
Տրամադրվող կից քարտեր	• Visa Platinum Business՝ 1,500 ՀՀ դրամ (ամսական)	• Visa Signature Business՝ 2,500 ՀՀ դրամ (ամսական)

¹ Առաջին ամսվա սպասարկման վճարը գանձվում է անմիջապես քարտային հաշիվը բացելիս, իսկ յուրաքանչյուր հաջորդ ամսվա համար՝ տվյալ ամսվա ընթացքում:

² Կից քարտերի համար գործում են նույն սակագները, ինչ հիմնական քարտերի համար՝ բացառությամբ քարտային հաշվի ամսական սպասարկման վճարի: Հիմնական քարտապանի կողմից կարող է սահմանվել կից քարտից գործարքների կատարման ամսական առավելագույն սահմանաչափ:

**ԲԻԶՆԵՍ ՊՐԵՄԻՈՒՄ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
(ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ)**

Գործառնության տեսակը	VISA PLATINUM BUSINESS	VISA SIGNATURE BUSINESS
	• Visa Business³	• Visa Platinum Business⁴ • Visa Business³
Կանխիկ տրամադրում Ինեկոբանկի կանխիկացման կետերում⁵	• Դեբետային քարտերի համար՝ 0.25% • Կրեդիտային քարտերի համար՝ 1%	
Առանց քարտի կիրառման կանխիկ տրամադրում Ինեկոբանկի դրամարկղերում	Դեբետային քարտերի համար. • ՀՀ դրամ՝ 0.25% • ԱՄՆ դոլար՝ 1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ • Եվրո՝ 1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ • ՌԴ ռուբլի՝ 0.5%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ Կրեդիտային քարտերի համար. Սույն սակագներով կրեդիտային քարտերի համար սահմանված՝ Ինեկոբանկի կանխիկացման կետերում կանխիկ տրամադրման համար սահմանված սակագնից և սույն սակագներով դեբետային քարտերի համար սահմանված առանց քարտի կիրառման կանխիկ տրամադրում Ինեկոբանկի դրամարկղերում սակագնից առավելագույնը:	

³ Հաճախորդին կարող է տրամադրվել երկու անվճար Visa Business կից քարտ, իսկ երրորդ և հետագա կից քարտերի դեպքում քարտի սպասարկման սակագինը սահմանվում է «Ինեկոբանկ» ՓԲԸ Բիզնես վճարային քարտերի սպասարկման պայմաններ և սակագներ փաստաթղթով կից քարտերի ամսական սպասարկման վճար սակագնի համաձայն:

⁴ Հաճախորդին կարող է տրամադրվել մեկ անվճար Visa Platinum Business կից քարտ, իսկ երկրորդ և հետագա կից քարտերի դեպքում քարտի սպասարկման սակագինը սահմանվում է սույն փաստաթղթի կից քարտերի ամսական սպասարկման վճար սակագնի համաձայն:

⁵ Առանց քարտի կիրառման բանկոմատներից կանխիկացումը՝ Apple Pay և Google Pay համակարգերի միջոցով իրականացնելու դեպքում միանվագ գործարքի սահմանաչափը՝ 150.000 ՀՀ դրամն է:

**ԲԻԶՆԵՍ ՊՐԵՄԻՈՒՄ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
(ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ)**

Գործառնության տեսակը	VISA PLATINUM BUSINESS	VISA SIGNATURE BUSINESS
Կանխիկի տրամադրում ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կանխիկացման կետերում ^{5 6}	- Դեբետային քարտերի համար՝ 1% - Կրեդիտային քարտերի համար՝ 2%	
Կանխիկի տրամադրում ArCa համակարգի միջոցով հավաստագրում չտրամադրող բանկերի կանխիկացման կետերում և ՀՀ տարածքից դուրս ^{5 6}	2%, սակայն ոչ պակաս քան 1,500 ՀՀ դրամ	
Քարտից քարտ փոխանցում ⁷	- Դեբետային քարտերի համար՝ 0.25% - Կրեդիտային քարտերի համար՝ 1%	
Քարտային հաշվից նույն հաճախորդի այլ բանկային հաշիվներին փոխանցում ⁷ (միայն ԻնեկոՕնլայն/ԻնեկոՄոբայլ համակարգերով)		

⁶ Անկախ սույն փաստաթղթով սահմանված սակագներից՝ այլ բանկերը իրենց կողմից սպասարկվող կանխիկացման կետերում իրականացվող գործարքների համար կարող են կիրառել լրացուցիչ վճարներ: Սույն փաստաթղթով սահմանված սակագինը կիրառվում է գործարքի ամբողջական գումարի նկատմամբ, որը ներառում է նաև այլ բանկի կողմից կիրառվող հնարավոր միջնորդավճարները, վճարները:

⁷ ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգերի «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող փոխանցումների համար կիրառվում են «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարված գործարքների համար սահմանված սակագները:

**ԲԻԶՆԵՍ ՊՐԵՄԻՈՒՄ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
(ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ)**

Գործառնության տեսակը	VISA PLATINUM BUSINESS	VISA SIGNATURE BUSINESS
Կատարված գործարքների վերաբերյալ SMS/Viber/WhatsApp հաղորդագրության ուղարկում ⁸	Անվճար	
Քարտի առաքման դեպքում քարտի տրամադրման վճար	Անվճար	
Քարտի շտապ պատվիրման սակագին	3,000 ՀՀ դրամ	
Կորցրած կամ վնասված քարտի վերաթողարկում	Անվճար	
Կորցրած կամ վնասված քարտի հրատապ վերաթողարկում ՀՀ տարածքից դուրս ⁹	Համաձայն Visa վճարային համակարգի կողմից "Global Customer Assistance Service (GCAS)" ծառայության սակագների	
Կանխիկ գումարի շտապ տրամադրում արտասահմանում (մինչև 5,000 ԱՄՆ դոլար) ⁹	Համաձայն Visa վճարային համակարգի կողմից "Global Customer Assistance Service (GCAS)" ծառայության սակագների	
Օդանավակայանների DragonPass քիզնես	Տարեկան 2 անգամ	Տարեկան 6 անգամ

⁸ Եթե Հաճախորդի հեռախոսահամարը տրամադրված չէ ՀՀ-ում գործող օպերատորների կողմից (օտարերկրյա հեռախոսահամար է), ապա Բանկը կարող է քարտային որոշ գործարքների վերաբերյալ հաղորդագրությունները առաջնահերթ ուղարկել Հաճախորդի հեռախոսահամարին «Viber» կամ «WhatsApp» հավելվածների միջոցով, իսկ այդ հավելվածների միջոցով ծանուցման անհնարինության դեպքում՝ SMS հաղորդագրությամբ:

⁹ Արտոնությունները տրամադրվում են Visa վճարահաշվարկային ընկերության կողմից: Արտոնություններին առավել մանրամասն հնարավոր է ծանոթանալ այցելելով <https://cis.visa.com/pay-with-visa/commercial-visa-cards.html> հղմամբ, կամ դիմելով Visa Concierge ծառայության:

**ԲԻԶՆԵՍ ՊՐԵՄԻՈՒՄ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
(ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ)**

Գործառնության տեսակը	VISA PLATINUM BUSINESS	VISA SIGNATURE BUSINESS
սպասասարահներ ^{9 10} անվճար մուտք ¹¹		
Բժշկական ծախսեր ⁹	Անվճար	
Ճանապարհորդական ապահովագրություն ⁹	Անվճար	
Միջազգային կոնսիերժ ծառայություն ⁹	Անվճար	
Անվճար Fast Track ծառայություն ⁹	Տարեկան 2 անգամ	Տարեկան 10 անգամ

Ընդհանուր դրույթներ Բիզնես վճարային քարտերի համար

1. Քարտով անկանխիկ գործարքների իրականացումն անվճար է: Մեկ անկանխիկ գործարքի համար առավելագույն սահմանաչափ, ինչպես նաև անկանխիկ գործարքների օրական առավելագույն սահմանաչափ և քանակ չի սահմանվում:
2. Կանխիկացման կետերում կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը 10 գործարք է:
3. Կանխիկացման կետերում կանխիկացման գործարքների օրական առավելագույն սահմանաչափն է՝ 6,000,000 ՀՀ դրամ/15,000 ԱՄՆ դոլար/ 15,000 Եվրո/ 1,500,000 ՌԴ ռուբլի:

¹⁰ Սպասասարահներ, որոնք ներառված են DragonPass ծառայության շրջանակում առաջարկվող սպասասարահների ցանկում:

¹¹ Օդանավակայանների բարձրակարգ սպասարկման սրահներ յուրաքանչյուր լրացուցիչ այցելուի 1 այցի կամ տարեկան անվճար մուտքերի սպառումից հետո քարտապանի յուրաքանչյուր լրացուցիչ 1 այցի համար կգանձվի սակագին՝ 32 ԱՄՆ դոլար/համարժեք ՀՀ դրամի չափով գումար: Հաճախորդի՝ տվյալ օրացուցային տարում չօգտագործված անվճար մուտքերի հնարավորությունը չի փոխանցվում հաջորդ տարի:

4. Հաճախորդի դիմումի համաձայն պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար կանխիկացման սահմանաչափի բարձրացումն¹² իրականացվում է անվճար:

5. Քարտը տրամադրվում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մարզերում գտնվող Բանկի մասնաճյուղերի համար նշված ժամկետին գումարվում է նաև քարտի տեղափոխման ժամանակը: Շտապ պատվիրման դեպքում քարտը տրամադրվում է 1 բանկային օրվա ընթացքում միայն Բանկի Կոմիտաս 2 մասնաճյուղում, իսկ Բանկի այլ մասնաճյուղերում նշված ժամկետին գումարվում է նաև քարտի տեղափոխման ժամանակը:

6. Քարտերի առաքման հնարավորությունը հասանելի է Երևան քաղաքում և ՀՀ մարզերում: Քարտերի առաքման հնարավորությունը գործում է Բանկի մասնաճյուղերում և ԻնեկոՕնլայն համակարգի միջոցով նոր քարտ պատվիրելու դեպքում, ինչպես նաև Բանկի մասնաճյուղերում և ԻնեկոՕնլայն համակարգի միջոցով հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա քարտի վերաթողարկման դեպքում: Քարտը հաճախորդին առաքվում է Բանկում քարտի առաքման փաթեթը պատրաստ լինելուց հետո 1-3 աշխատանքային օրերի ընթացքում Երևանի տարածքում և 1-5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ մարզերում առաքումների դեպքում և հաճախորդին հանձնվում է անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

7. Նոր PIN կոդի տրամադրման համար միջնորդավճար չի գանձվում:

8. Քարտի բլոկավորումը և ապաբլոկավորումն անվճար է:

9. Քարտային հաշվի վաղաժամկետ փակման դեպքում լրացուցիչ միջնորդավճար չի կիրառվում:

10. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայությունը ակտիվանում է քարտի պատվիրման պահին հաճախորդի համապատասխան հանձնարարականի հիման վրա: Հաճախորդը կարող է նաև ընտրել գումարի չափը, որը գերազանցող գործարքների վերաբերյալ ցանկանում է ստանալ SMS հաղորդագրություն: Վճարային քարտով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայության ակտիվացում/ապաակտիվացում, ինչպես նաև վերոնշյալ գործարքի գումարի չափի փոփոխություն կարող է իրականացվել քարտի գործողության ժամկետի ընթացքում հաճախորդի կողմից Բանկի տարածքում/ԻնեկոՕնլայն համակարգում ներկայացված համապատասխան դիմում-հայտի հիման վրա:

¹² Կանխիկացման սահմանաչափի բարձրացումն իրականացվում է Բանկի համաձայնությամբ:

Հաճախորդի կողմից այլ հանձնարարական չլինելու դեպքում հաղորդագրությունները ուղարկվում են 1,000 ՀՀ դրամ/2 ԱՄՆ դոլար/2 Եվրո/125 ռուբլի գումարը գերազանցող գործարքների համար:

11. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:

12. Քաղվածքի ձևակերպման ամսաթիվ (Statement date) է համարվում յուրաքանչյուր ամսվա 1-ը: Ամսական քաղվածքի տրամադրումն անվճար է: Յուրաքանչյուր լրացուցիչ քաղվածքի տրամադրման դեպքում սակագին չի գանձվում: Ընդ որում, հաճախորդը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն, ուղղված Քաղվածքները ստանալուն, այդ թվում նաև, բայց չսահմանափակվելով՝ մասնաճյուղ այցելելու և քաղվածքը ստանալու միջոցով, իսկ Բանկը պարտավոր չէ էլեկտրոնային հաղորդակցության կամ որևէ այլ կապի միջոցներով (այդ թվում՝ փոստային եղանակով) քաղվածքը ուղարկել քարտապանին:

Կրեդիտային քարտերի դեպքում քաղվածքում արտացոլվում է նաև հաճախորդի պարտավորությունների և մարման ենթակա գումարների վերաբերյալ տեղեկատվությունը:

Վարկային գծի տրամադրման պայմաններ և սակագներ Visa Platinum Business/Visa Signature Business կրեդիտ քարտերի համար

Վարկային գծի սահմանաչափ (ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ)		• Սկսած՝ 1,000,000 ՀՀ դրամ, 3000 ԱՄՆ դոլար/Եվրո • Մինչև՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված մեկ փոխառուի ռիսկի առավելագույն չափի նորմատիվով թույլատրելի սահմանաչափը:
Տարեկան անվանական տոկոսադրույք	ՀՀ դրամ	16%
	ԱՄՆ դոլար	14%
	Եվրո	12%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	ՀՀ դրամ	17.23%
	ԱՄՆ դոլար	14.93%
	Եվրո	12.68%
Արտարժույթային վարկային գծերի դեպքում, կախված արտարժույթի փոխարժեքի տատանումներից, սույն փաստաթղթում ներկայացված տարեկան փաստացի տոկոսադրույքները կարող են փոփոխվել:		
	1-ին խմբի գործարքներ ¹³	Չի կիրառվում

¹³ 1-ին խմբի գործարքներ՝

- Գործարքներ, որոնք կատարվել են այն կետերում, որոնք գրանցված են որպես
 - Կանխիկացման կետ
 - Պետական վճարումների իրականացման կետ
 - Քարտից քարտ փոխանցման կետ
 - Քարտով կոմունալ վճարումների իրականացման կետ
 - Քարտից «Պարբերական վճարումների» միջոցով կատարվող գործարքները
 - 2-րդ խմբում չներառված բոլոր գործարքները, եթե այլ բան չի նախատեսված Բանկում գործող ծառայությունների պայմաններով:
- 2-րդ խմբի գործարքներ՝
- Որպես առևտրի և սպասարկման կետ գրանցված կետերում անկանխիկ գործարքներ:

Անտոկոս ժամանակահատված	2-րդ խմբի գործարքներ ¹³	մինչև 52 օր՝ կախված վարկն օգտագործելու ամսաթվից
Վարկային գծի ամսական նվազագույն հետվճարի չափ		Օգտագործված վարկի գումարի 10%
Վարկային գծի ամսական նվազագույն հետվճարը և վճարման ենթակա տոկոսագումարները ժամանակին չվճարելու և/կամ պայմանագրով սահմանված վարկի գումարը և վճարման ենթակա տոկոսագումարը վերադարձման վերջնաժամկետին չվճարելու համար գանձվող տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար		Վճարման ենթակա գումարի 0.13%
Վճարման ժամկետ՝ սկսած յուրաքանչյուր ամսվա 1-ից (ներառյալ)		21 օր
Վարկային միջոցների հաշվին վարկի մարման վճար՝ մարվող գումարից		0.5%

Ծանոթություն՝

1. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: Եթե հաճախորդը համաձայն չէ տոկոսադրույքի փոփոխության հետ, ապա իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով տրամադրված վարկային գծի հիմնական գումարն ամբողջությամբ և վճարելով հաշվարկված տոկոսները և այլ վճարները: Անկախ Բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկային գծի (փոխառության) տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսադրույքի կրկնապատիկը:

2. Վարկային գծերը տրամադրվում են անկանխիկ՝ պարտադիր նվազագույն հետվճարի (եթե այդպիսին առկա է) և տոկոսագումարների ամսական վճարման, մինչև վարկային գծի ժամկետի ավարտը մայր գումարի վճարման պայմանով:

3. Վարկային գծերը տրամադրվում են քարտի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար:

4. Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ արտարժույթով տրամադրված վարկային գծի մարումների վրա:

5. Վարկային գծի չօգտագործված միջոցների դիմաց տոկոս չի կիրառվում:

6. Վարկային գծի տրամադրման դեպքում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում օգտագործված Վարկային գծի գումարը կամ դրա մի մասը մինչև Վճարման ժամկետի ավարտի օրը (ներառյալ) վերադարձնելու դեպքում, այդ գումարի նկատմամբ Գրանցման օրվանից մինչև փաստացի վճարման օրը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար տոկոսներ չեն հաշվարկվում:

7. Վարկային գիծը ցանկացած ժամանակ կարող է վաղաժամկետ մարվել, որի դեպքում տույժեր և այլ վճարներ չեն գանձվում:

8. Վարկային գծերի դեպքում Բանկի որոշմամբ կարող է պահանջվել գրավ: Տոկոսագումարների և վարկային գծի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված գույքը (տունը, մեքենան կամ այլ) կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ վարկառուի մասին տեղեկատվությունը կգրանցվի վարկային ռեգիստրում: Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում գրավը բավարար չլինելու դեպքում հնարավոր է պարտավորությունների մարում վարկառուի այլ գույքի հաշվին:

9. Վարկային տրամադրման համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Նախքան ֆինանսական վերլուծության իրականացումը՝

Իրավաբանական անձանց/ ԱԶ համար

- Իրավաբանական անձի կանոնադրությունը (բոլոր փոփոխություններով):

- Իրավաբանական անձի/ԱԶ ղեկավարների և հիմնական սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթերը:

- Բաժնետիրական ընկերությունների դեպքում սեփականատերերի ցուցակը Կենտրոնական Դեպոզիտարիայից:

- Իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը վարկային գիծ ստանալու

- Իրավաբանական անձի/ԱԶ-ի Շահութահարկի հաշվետվություն կամ Շրջանառության հարկի հաշվետվություն:

- Գրավադրվող գույքի սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ:

- Գրավատուից/երաշխավորից պահանջվող փաստաթղթեր՝

- Ֆիզիկական անձ գրավատուի/երաշխավորի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ,

○ իրավաբանական անձ գրավատուի/երաշխավորի դեպքում՝ ղեկավարների և մասնակիցների անձը հաստատող փաստաթղթեր, կանոնադրությունը բոլոր փոփոխություններով, Բաժնետիրական ընկերությունների դեպքում սեփականատերերի ցուցակը Կենտրոնական Դեպոզիտարիայից, ինչպես նաև իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու/երաշխավորություն տալու վերաբերյալ:

○ Բանկի համար ընդունելի անկախ գնահատող ընկերությունների կողմից կազմված գրավի առարկայի գնահատման հաշվետվություններ/ գրավի առարկայի ակտ:

○ Հաճախորդի ֆինանսական վերլուծության իրականացման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

• Վարկային հայտի հաստատումից հետո՝

○ Գրավադրվող գույքի սեփականության հիմքերը:

○ Տեղեկանք իրավասու մարմնի կողմից գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ:

○ Գրավատու ֆիզիկական անձի ամուսնության/ամուսնալուծության վկայական (առկայության դեպքում), կնոջ/ամուսնու անձը հաստատող փաստաթղթերը, մահվան վկայական (առկայության դեպքում):

○ Ապահովագրության պահանջի առկայության դեպքում ապահովագրության համապատասխան փաստաթղթերը:

10. Վարկային գծի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ՝

• գործող եկամտաբեր բիզնեսի առկայություն¹⁴

• դրական կամ չեզոք վարկային պատմություն

• գործունեության թափանցիկություն

• բավարար եկամուտներ

• սեփականության առկայություն

• գրավի և/կամ երաշխավորության առկայություն

11. Վարկային գծի տրամադրման վերաբերյալ բացասական որոշման կայացման չափանիշներ՝

• վարկային գիծը մարելու համար անբավարար եկամուտներ

• հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում

¹⁴ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում բացառության կարգով իրականացվում է նաև սկսնակ բիզնեսի վարկավորում:

- բացասական վարկային պատմություն
- հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտ:

12. Վարկային գծի տրամադրման որոշման կայացում և հաճախորդին տեղեկացում՝ 1-7 աշխատանքային օր:

13. Վարկային գծի ակտիվացման ժամկետ՝ վարկային գծի տրամադրման դրական որոշման կայացումից հետո 1-7 աշխատանքային օրվա ընթացքում:

14. Բանկի և հաճախորդի միջև կնքվելիք բիզնես քարտային վարկային գծի պայմանագրում կարող են սահմանվել հավելյալ պայմաններ կամ պայմաններ, որոնք չեն համապատասխանում սույն Պայմաններին և սակագներին, տվյալ դեպքում, այդ պայմանների մասով կգործեն բիզնես քարտային վարկային գծի պայմանագրում սահմանված պայմանները: